ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՎԻԿՏՈՐԻԱ ՌՈՒԲԵՆԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԱՐԵԳԻՆ ԱՌԱՋԻՆԸ ՄԱՆԿԱՎԱՐԺ

ԺԳ.00.01 «Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2025

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝	մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Ն. Կ. Հարությունյան**
Պաշտոնական ընդդիմախոսներ՝	մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Պ. Հ. Գևորգյան**
	մանկավարժական գիտությունների թեկնածու, ասիստենտ **Ա. Տ. Մայիլյան**
Առաջատար կազմակերպություն՝	Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2025 թվականի նոյեմբերի 28-ին՝ ժամը 14^{00}-ին, Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԲԿԳԿ-ի մանկավարժության 058 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ ՀՀ, 0025, Երևան, Աբովյան $52^{\text{ա}}$, ԵՊՀ 8-րդ մասնաշենք, թիվ 208 լսարան:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գիտական գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 28.10.2025 թվականին:

058 մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար, մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ՝ **Ա.Փ.Ղազարյան**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

<u>Թեմայի արդիականությունը:</u>

Արդի հարափոփոխ աշխարհում, երբ ազգային հոգևոր վերազարթոնքի, ժողովրդավարության ու պետականության ամրապնդման, անկախ և ինքնիշխան երկիր կերտելու հարցեր են օրակարգում, առավել կարևոր է այդ հարցերից յուրաքանչյուրին իր ուրույն դիրքորոշումն ու լուծման ուղիներն առաջարկած Ամենայն Հայոց Գարեգին Ա Կաթողիկոսի գործունեության բնագավառների ուսումնասիրությունը:

Այդ բնագավառներից առավել կարևորի՝ մանկավարժ-կաթողիկոսի գործունեությանն ենք անդրադարձ կատարել՝ նորովի ներկայացնելով Վեհափառին և նրա մանկավարժական հայացքները:

Գարեգին Առաջին Վեհափառն իր մանկավարժական հայացքների հիմքում դնում է ուսուցչին՝ նրան համեմատելով լույս տվող և սպառվող մոմի հետ:

Մանկավարժության պատմության հարուստ էջերը լրացրել ենք մանկավարժ-կաթողիկոսի մանկավարժական գործունեության և հայացքների ուսումնասիրությամբ՝ համարելով նրան հայ մանկավարժական մտքի պատմության այն կարկառուն ներկայացուցիչներից մեկը, որը սերունդներին կմղի ինքնամաքրման, իսկ բոլոր մանկավարժների համար կդառնա օրինակ անձնազոհությամբ արժեքներ ստեղծելու ճանապարհին և գործելու ի փառս հայ ժողովրդի, գալիք սերունդների և միասնական ու ամուր պետականության:

Առաջին անգամ Վեհափառ Հոր մանկավարժական գործունեությանն անդրադարձել է մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ն. Հարությունյանն իր «Հայ մանկավարժ կաթողիկոսները» գրքում՝ արժևորելով մեծանուն Կաթողիկոսին՝ որպես մանկավարժ:

<u>Հետազոտության նպատակը:</u>

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել, վերլուծել և ներկայացնել Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Գարեգին Բ-ի և Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Ա-ի մանկավարժական գործունեությունը, նրա տեսակետներն ու մոտեցումներն անձի ձևավորման, ուսուցման և դաստիարակության գործընթացների մասին, բացահայտել նրա տեղն ու դերը հայ մանկավարժական մտքի պատմության մեջ:

<u>Հետազոտության առաջադիր խնդիրներն են՝</u>

1. Համառոտ ակնարկով ներկայացնել Կիլիկիայի հայկական պետության կործանումից հետո հայկական մի հոծ զանգվածի՝ Սիրիայում և Լիբանանում ապաստանելու, տարբեր քաղաքներում գոյություն ունեցող հայկական համայնքների աշխուժացման հարցերը և սիրիահայ ու լիբանանահայ գաղութների դժվարություններն ու ձեռքբերումները:
2. Ուսումնասիրել և ներկայացնել Վեհափառ Հայրապետի հարուստ կենսագրության կարևոր դրվագները, հոգևոր-հասարակական-մշակութային-ազգապահպան գործունեությունը:
3. Ուսումնասիրել և ներկայացնել Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Գարեգին Երկրորդի մանկավարժական գործունեությունը:
4. Հետազոտել և վերլուծել Ամենայն Հայոց Գարեգին Ա Կաթողիկոսի մանկավարժական մոտեցումները նրա հրապարակախոսության մեջ:
5. Ներկայացնել ու գնահատել Ամենայն Հայոց Վեհափառի կողմից մշակված ուսումնական ձեռնարկներն ու դասագրքերը:
6. Վերլուծել Ամենայն Հայոց Վեհափառի դիդակտիկական հայացքները, վեր հանել փիլիսոփայական և հոգեբանամանկավարժական հիմքերը:
7. Բացահայտել Վեհափառի արժեքավոր մոտեցումներն անձի ձևավորման մասին:
8. Վերլուծել Վեհափառ Հայրապետի տեսակետները դաստիարակության բովանդակության ու տեսակների մասին:
9. Արժևորել Գարեգին Առաջին Ամենայն Հայոց Կաթողիկոսի դերը հոգևոր նոր սերնդի կրթության գործում:

<u>Պաշտպանության ներկայացվող դրույթները:</u>

1. Վեհափառ Հայրապետն անգնահատելի ծառայություն է մատուցել ոչ միայն Հայ առաքելական եկեղեցու ազգապահպան հիմքերն անսասան պահելու գործում, այլև ծավալել է մանկավարժական արգասաբեր գործունեություն, որն ուղղված է եղել ազգային արժեքներով սերունդ կրթելու և դաստիարակելու շնորհակալ գործին:

2. Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Գարեգին Բ-ի մանկավարժական գործունեությունը մեծ հետք է թողել Լիբանանի հայկական գաղթօջախում՝ Դպրեվանքի կրթադաստիարակչական աշխատանքները կազմակերպելիս:

3. Վեհափառ Հոր մանկավարժական մոտեցումները ուսուցման և դաստիարակության հարցերին արդիական են և արժանի են մեծ գնահատանքի՝ որպես առաջադեմ մանկավարժ-գիտնականի տեսակետներ:

4. Ամենայն Հայոց Հայրապետ Գարեգին Առաջինի ջանքերով իրականացվել են լուրջ բարեփոխումներ կրոնական դաստիարակության կազմակերպման գործում և՛ Լիբանանում, և՛ Հայաստանում:

<u>Հետազոտության գիտական նորույթը:</u>

1. Ուսումնասիրվել և արժևորվել է Վեհափառի հոգևոր և մանկավարժական գործունեությունը ինչպես արտերկրում, այնպես էլ Հայաստանում:

2. Վերլուծվել են Վեհափառի տեսակետներն ու մոտեցումներն ուսուցման և դաստիարակության վերաբերյալ իր հեղինակած մանկավարժական աշխատություններում:

3. Վերլուծվել են Գարեգին Առաջին Ամենայն Հայոց Կաթողիկոսի հրապարակախոսական նյութերում ամփոփված մանկավարժական հայացքները:

4. Ուսումնասիրվել և վերլուծվել են Վեհափառի հեղինակած փիլիսոփայական, հոգեբանական, մանկավարժական գործերը, հոդվածները, կոնդակները, ինչպես նաև արխիվային նյութերը (Հայաստանում և Լիբանանում), որոնք օգնել են բացահայտելու և ներկայացնելու Վեհափառին՝ որպես մանկավարժ:

<u>Հետազոտության տեսական նշանակությունը:</u>

Հանգամանորեն ուսումնասիրվել և վերլուծվել են Վեհափառի փիլիսոփայական, հոգեբանական և մանկավարժական աշխատությունները, հոդվածները, կոնդակները, մեծաթիվ արխիվային նյութեր՝ պահված Հայաստանում և Լիբանանում՝ ներկայացնելով դրանցում Վեհափառի ինքնատիպ մոտեցումներն ուսուցման և դաստիարակության վերաբերյալ:

<u>Հետազոտության գործնական նշանակությունը:</u>

Հետազոտության գործնական նշանակությունը պայմանավորված է հայ մանկավարժական մտքի պատմությունը ևս մեկ արժանավոր տեսաբանի և պրակտիկ մանկավարժի կերպարով հարստացնելու հանգամանքով: Ատենախոսության նյութերը կարող են հանդիսանալ սկզբնաղբյուր հիմնախնդրով հետաքրքրվողների համար:

<u>Ատենախոսության կառուցվածքը և ծավալը:</u>

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, 4 գլխից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից, հավելվածներից: Այն ամփոփված է համակարգչային 156 էջում:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունում հիմնավորվել է ատենախոսության թեմայի արդիականությունը, ներկայացվել են հետազոտության նպատակը, խնդիրները, գիտական նորույթը, պաշտպանության ներկայացվող դրույթները, տեսական և գործնական նշանակությունը, հետազոտության կառուցվածքն ու ծավալը:

Ատենախոսության **առաջին գլուխը**՝ վերնագրված **<u>«Ծայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Նորին Սուրբ Օծություն Տեր, Տեր Գարեգին Առաջինի (Նշան Սարգիսյան) կյանքն ու գործունեությունը»</u>**, բացահայտում է մանկավարժ կաթողիկոսի կյանքի անցած ուղին՝ սկսած Սիրիայից մինչև մայր Հայաստան, որի մանրամասն մեկնաբանությունն ու վերլուծությունը ներառում են այս գլխի 6 ենթագլուխները:

Առաջին ենթագլխում, որը վերնագրված է **«Նշան Սարգիսյանի կյանքը և ուսումնական գործունեությունը Սիրիայում»,** ներկայացված և վերլուծված են սիրիահայ և լիբանանահայ գաղթօջախների կյանքը 20-րդ դարում:

Կիլիկիայի հայկական պետության անկումից հետո բազմաթիվ հայեր ապաստան գտան Սիրիայում և Լիբանանում: Տարբեր քաղաքներում, հատկապես՝ Հալեպում, Դամասկոսում և Բեյրութում, վերակենդանացան հին հայկական համայնքները: Սփյուռքահայերը շուտով կառուցեցին եկեղեցիներ ու դպրոցներ՝ պահպանելու իրենց հավատն ու մշակույթը: Մեծ եղեռնից մազապուրծ եղած հայությունը նույնպես ապաստան գտավ այստեղ՝ հարստացնելով հայ կյանքի ներկապնակը: Անթիլիասը դարձավ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության կարևոր կենտրոն: Հետագայում Կաթողիկոսությունը մեծ տեղ հատկացրեց կրթական ու բարեգործական նախաձեռնություններին՝ կառուցելով դպրոցներ, եկեղեցիներ ու հիվանդանոցներ: Այս միջավայրում ծնվեց և մեծացավ Նշան Սարգիսյանը՝ ապագա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Գարեգին Բ-ն և Ամենայն Հայոց 131-րդ Կաթողիկոս Գարեգին Ա-ն, ով իր կյանքով խորհրդանշեց սփյուռքահայության տոկունությունը և ժողովրդի միասնության ուժը:

Երկրոդ ենթագլխում, որը վերնագրված է **«Նշան Սարգիսյանի ուսումնառությունը Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության Դպրեվանքում»,** ներկայացված և համակողմանիորեն վերլուծված են Դպրեվանքում Նշան Սարգիսյանի ուսումնառության տարիները:

1930 թվականին Սահակ Բ Խապայանի, Բաբկեն Ա Կաթողիկոսի և Շահե Արքեպիսկոպոսի ջանքերով Անթիլիասում հիմնված Դպրեվանքը՝ Կիլիկիո Կաթողիկոսության հոգևոր դարբնոցը, դարձավ ոչ միայն ուսումնական, այլև հոգևոր վերածննդի կենտրոն, որտեղ դաստիարակվում էին եկեղեցու ապագա սպասավորները: Դպրեվանքի պատմությունը կապված է Հայոց ցեղասպանությունից հետո Կիլիկիո Կաթողիկոսության վտարանդի ճակատագրի հետ: Այստեղ կրթություն ստացավ Նշան Սարգիսյանը, ով հետագայում հայտնի դարձավ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Գարեգին Բ և Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Ա: Դպրեվանքը նրան տվեց ոչ միայն գիտելիքներ, այլև օգնեց բացահայտել իր ուղին ու առաքելությունը: Ձեռնադրվելով սարկավագ, ապա կուսակրոն քահանա՝ նա իր ամբողջ կյանքը նվիրեց եկեղեցուն ու Դպրեվանքին: Նշան Սարգիսյանի աշխատասիրությունը և հոգևոր ձգտումները նրան տարան դեպի վարդապետություն և միջազգային ուսումնական փորձառություն: Նրա գործունեությունը առանձնացել է պարզությամբ ու անձնվիրությամբ: Դպրեվանքը նրա համար մնաց ոչ միայն կրթօջախ, այլև կյանքի խորհուրդ ու հոգևոր ծառայության ոգու աղբյուր:

Երրորդ ենթագլուխը, որը վերնագրված է **«Նշան Սարգիսյանի ուսումն Անգլիայի Օքսֆորդի համալսարանում»,** ամբողջացնում է Անգլիայի Օքսֆորդի համալսարանում Գարեգին Վարդապետի աստվածաբանական բարձրագույն կրթություն ստանալու տարիները:

1957–1959 թթ. Գարեգին Վարդապետը Եկեղեցիների համաշխարհային խորհրդի կրթաթոշակով սովորեց Օքսֆորդի համալսարանում՝ ստանալով աստվածաբանական բարձրագույն կրթություն: Օտարազգի ուսանողի «Որտե՞ղ է Հայաստանը» հարցը նրա մեջ ձևավորեց անշրջելի վճիռ՝ աշխարհին արժանապատվորեն ներկայացնել քրիստոնեական Հայաստանը: Այդ գիտակցությունը նրան մղեց գրել և 1959 թվականին պաշտպանել «Քաղկեդոնի ժողովը և Հայոց Եկեղեցին» թեմայով աշխատությունը, որն արժանացավ միջազգային բարձր գնահատանքի և դարձավ էկումենիկ կարևորության ուսումնասիրություն: Գիրքը բազմիցս հրատարակվեց (Լոնդոն, Նյու Յորք, Բեյրութ), հետագայում թարգմանվեց հայերեն և դարձավ Հայ եկեղեցու

դավանաբանական դիրքորոշման ճշգրիտ ներկայացման կարևորագույն աղբյուր: Օքսֆորդում ուսանելու տարիներն օգնեցին հասկանալու, որ հայ քրիստոնեական ավանդույթը ոչ թե անցյալի մնացուկ է, այլ կենսունակ ժառանգություն: Ուսման տարիները ձևավորեցին նրա գիտական մտածողությունը, խորացրին եկեղեցիների միջև երկխոսության կարևորության գիտակցումը և ամրապնդեցին պատասխանատվության զգացումը՝ արժանապատվորեն ներկայացնելու իր ժողովրդին ու Եկեղեցին:

Չորրորդ ենթագլուխը, որը վերնագրված է **«Գարեգին Սրբազանի հոգևոր գործունեությունը. Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության Սպահանի, Հյուսիսային Ամերիկայի Արևելյան թեմի և Կանադայի թեմի առաջնորդ»,** ներկայացնում է Գարեգին Սրբազանի հոգևոր գործունեությունը Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության տարբեր թեմերում:

Հինգերորդ ենթագլխում, որը վերնագրված է **«Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Գարեգին Երկրորդի հոգևոր-հասարակական գործունեությունը»,** ներկայացված և վերլուծված է 1977-1983 թթ. իբրև Մեծի Տանն Կիլիկիո Գարեգին Բ Աթոռակից Կաթողիկոս պաշտոնավարած, իսկ այնուհետև 1983-1995 թթ.՝ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Գարեգին Բ-ի հոգևոր-հասարակական գործունեությունը:

Վեցերորդ ենթագլխում, որը վերնագրված է **«Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Առաջինի հոգևոր և հասարակական գործունեությունը Հայաստանում»**, ամբողջական անդրադարձ է կատարվել 1995 թվականից Լուսավորչի գահի 131-րդ գահակալ Գարեգին Ա-ի հոգևոր և հասարակական գործունեությանը: Ներկայացված և վերլուծված են Վեհափառի հովվապետական ուղևորությունները՝ ուղղված միջեկեղեցական և միջազգային կապերի հետագա ընդլայնմանն ու ամրապնդմանը, վանական և Կաթողիկոսարանի ներքին կյանքի կանոնակարգմանն ու բարելավմանը: Ներկայացվել է Վեհափառի նախագահությամբ Հայաստանում քրիստոնեության պետական կրոն հռչակման 1700-ամյակի կենտրոնական հանձնաժողովի աշխատանքների մեկնարկը, ինչպես նաև կարևորվել է Վեհափառի ջանքերով համատարած բարոյական և հոգևոր քաղցի պայմաններում հայրենիքի հանդեպ սիրով լցված երիտասարդ հոգևորականների պատրաստության գործի աշխուժացումը:

Ատենախոսության **երկրորդ գլուխը**՝ վերնագրված **«Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Առաջինի մանկավարժական հայացքների ձևավորման**

<u>նախադրյալները»,</u> բաղկացած է 3 ենթագլխից: Այս գլխում ներկայացված է Վեհափառ Հոր մանկավարժական գործունեությունը Անթիլիասի Դպրեվանքում, նրա մանկավարժական հայացքները հրապարակախոսության մեջ և գործունեությունը Սուրբ Էջմիածնի Գևորգյան հոգևոր ճեմարանում:

Առաջին ենթագլխում, որը վերնագրված է **«Վեհափառ Հայրապետի մանկավարժական գործունեությունը Դպրեվանքում»,** ներկայացված և վերլուծված է 1952 թվականի սեպտեմբերի 28-ին կուսակրոն քահանա ձեռնադրված Գարեգին Վարդապետի մանկավարժական գործունեությունը Դպրեվանքում նախ որպես ուսուցիչ, ապա որպես տեսուչ և կրթական գործի կազմակերպիչ, ով դասավանդելուն զուգահեռ հրատարակել է աստվածաբանական և փիլիսոփայական դասագրքերի շարք:

Երկրորդ ենթագլխում՝ վերնագրված **«Գարեգին Առաջին Ամենայն Հայոց Կաթողիկոսի մանկավարժական հայացքները հրապարակախոսության մեջ»,** հանգամանորեն ներկայացված և վերլուծված են մանկավարժ-աստվածաբանի տասնյակ հոդվածներն ու աշխատությունները, որոնք իրենց ուսուցողական և դաստիարակչական բնույթով անգնահատելի են և արդիական նաև մեր օրերում: Դրանք հատկապես ուղենշային դեր ունեն հոգևորականության կամ կրոնական դաստիարակության ասպարեզում պատրաստվող ուսանողների համար:

Երրորդ ենթագլխում, որի վերնագիրն է **«Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Առաջինի մանկավարժական գործունեությունը Սուրբ Էջմիածնի Գևորգյան հոգևոր ճեմարանում»,** ներկայացված և վերլուծված է Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրվելուց հետո Գարեգին Վեհափառի գործունեությունը՝ ուղղված Սուրբ Էջմիածնի Գևորգյան հոգևոր ճեմարանի վերակառուցմանը, որը նպատակ ուներ բարելավել ոչ միայն ճեմարանի սաների կենցաղը, այլև «վերանորոգել» ճեմարանի կրթական գործընթացները՝ կրթության որակը դարձնելով առանցքային, իսկ ստացած գիտելիքների վերջնարդյունքը՝ կյանքին ծառայեցնելուն:

Ատենախոսության **երրորդ գլուխը**, որը վերնագրված է «**<u>Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Առաջինի մանկավարժական հայացքները»,</u>** ամփոփված է 4 ենթագլխում, որոնցում ներկայացված և վերլուծված են Գարեգին Վեհափառի տարբեր տարիների աշխատություններում առաջադրված մանկավարժական հիմնախնդիրները, ուսուցման ու մայրենի լեզվի արժևորման հարցերը, ինչպես նաև մոտեցումներն ու հայացքները ուսուցչի կերպարին:

Առաջին ենթագլխում, որը վերնագրված է **«Մանկավարժական հիմնախնդիրների վերլուծությունը Վեհափառ Հայրապետի աշխատություններում»,** ներկայացված և վերլուծված են մանկավարժ կաթողիկոսի աշխատություններում արծարծված մանկավարժական հիմնախնդիրները, որոնցում առանցքային են երջանիկ մարդու դաստիարակության հարցը և անձի ինքնաճանաչման խնդիրը:

Ամենայն Հայոց Գարեգին Ա Կաթողիկոսի մանկավարժական հայացքներում առանցքային է անձի ձևավորման հիմնախնդիրը, որի հիմքում առաջին ու ամենակարևոր օղակը հայ ընտանիքն է՝ որպես կյանքի, կրթության և հոգևոր աճի միջավայր: Վեհափառ Հայրն ընդգծում է, որ երջանկությունը և կյանքի իմաստը կախված չեն տեխնիկական առաջընթացից կամ նյութական հարստությունից, այլ բխում են մարդու ներաշխարհից, արժեքների ընկալումից և մարդկային ինքնագիտակցությունից: Նա նկատում է, որ մարդու ինքնաճանաչումն ու «ես»-ի բացահայտումը մշտական և բազմաշերտ գործընթացներ են, որոնց նախապայմաններն են խոնարհությունն ու ներքին անկեղծությունը:

Վեհափառ Հայրապետն իր աշխատություններում և քարոզներում պարբերաբար անդրադառնում է այն հարցերին, թե ինչպես ճանաչել ինքներս մեզ, հասկանալ մեր մարդկային և բարոյական կարողությունները, և ինչպես այն ծառայեցնել երջանկության, կյանքի իմաստի և անձի լիարժեքության ձևավորմանը: Նա ընդգծում է, որ միայն սեփական ներաշխարհի ճանաչումը կարող է հանգեցնել կյանքի իմաստի բացահայտմանը, հոգևոր ներդաշնակությանն ու արդյունավետ հարաբերությունների ստեղծմանը:

Վեհափառ Հայրապետի մանկավարժական հայացքներում «Ծանի՛ր զքեզ» սկզբունքը դառնում է անձի կյանքի անփոփոխ և կենսական հրամայականը՝ որպես ինքնաճանաչման, հոգևոր աճի և երջանկության նախապայման:

Երկրորդ ենթագլխում՝ վերնագրված **«Ուսուցման հարցերը Գարեգին Առաջին Ամենայն Հայոց Կաթողիկոսի աշխատություններում»,** վերլուծված են մանկավարժ կաթողիկոսի տեսակետները ուսուցման տարբեր հարցերի վերաբերյալ: Հատկանշական է Վեհափառի բանաձևումը ուսուցման առաքելության վերաբերյալ, այն է՝ «պատրաստել, ընտրել, ուղարկել»: Այստեղ Վեհափառ Հոր կողմից առաջ են քաշվում ուսուցման գործընթացում տարբեր սկզբունքների, մասնավորապես՝ համագործակցության սկզբունքի կարևորությունը, և ընդգծվում է մանկանը կրթելու ամենակարևոր գործոնը՝ սերը:

Երրորդ ենթագլխում, որը վերնագրված է **«Մայրենի լեզվի արժևորման հարցերը Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Առաջինի աշխատություններում»,** հանգամանորեն վերլուծված են Վեհափառի հայացքներն ու մոտեցումները մայրենի լեզվի արժևորման հարցերին, ուր հատկապես կարևորվում է գրաբարի դերը՝ որպես լեզվի պահպանման և հարատևման գրավական: Ինչպես նաև վերլուծված է Վեհափառ Հոր լեզվական անսպառ գանձարանը՝ նորաստեղծ բառերով, լեզվական-արտահայտչական պատկերներով և բազմերանգությամբ:

Չորրորդ ենթագլխում, որը վերնագրված է **«Ուսուցչի նկարագիրն ըստ Ծայրագույն Վարդապետ Գարեգին Առաջինի»,** վերլուծված է հայակերտման և մարդակերտման առաքյալի՝ ուսուցչի օրինակելի տիպարը և մոտեցումները, թե ինչպիսին պիտի լինի մերօրյա ուսուցիչը՝ հիմքում դնելով անձնանվիրումի և ինքնազարգացման հիմնաքարերը: Այստեղ կարևորված են Վեհափառ Հայրապետի տեսակետներն ուսուցչի անձնային և մասնագիտական որակների մասին, հատկապես՝ անձնական օրինակի դերը:

Գարեգին Ա Վեհափառը մանկավարժությունը դիտարկում էր ոչ միայն մասնագիտություն, այլև վեհ առաքելություն: Նա ուսուցչին ընկալում էր որպես կենդանի օրինակ, սեր ու նվիրվածություն ճառագող առաջնորդ: Վեհափառը կարևորում էր դպրոցի ու եկեղեցու սերտ միասնությունը՝ հավատալով, որ հայ դպրոցի արմատները եկեղեցու ծոցում են: Ուսուցման հիմքում դնելով երկկողմանի փոխգործակցությունը՝ Գարեգին Վեհափառը կարծում էր, որ ուսուցիչն ու աշակերտը պետք է լինեն փոխլրացնող սուբյեկտներ: Նա հավատում էր, որ մանկավարժությունը Աստծուց տրված շնորհ է, որ պահանջում է նվիրում ու բարոյական բարձր կերպար: Գարեգին Ա-ն համոզված էր՝ ուսուցիչը նախ իր օրինակով պիտի դաստիարակի սերնդին: Նրա համար ուսուցումը միայն գիտելիք տալը չէ, այլև անձի ներաշխարհի ձևավորումը՝ հիմնված ճգնության, սիրո և անձնանվիրումի վրա: Վեհափառը մշտապես ընդգծում էր առաջնահերթն ու էականը երկրորդականից զատելու կարևորությունը: Այդ է պատճառը, որ մանկավարժ-կաթողիկոսի սաները նրան հիշում են որպես խորը մտքի ու պայծառ ոգու տեր ուսուցչի: Այսպիսիով՝ Գարեգին Ա Վեհափառը դարձավ մանկավարժ-կաթողիկոս, ում կերպարը ուղենշային է հայ մանկավարժության պատմության մեջ:

Ատենախոսության **չորրորդ գլուխը**՝ վերնագրված «**<u>Դաստիարակության հիմնահարցերն Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Առաջինի մանկավարժական մոտեցումներում»,</u>** ամփոփված է 4 ենթագլխում, ուր

ներկայացված և վերլուծված են Վեհափառի մոտեցումներն անձի ձևավորման հարցին, նրա փիլիսոփայական և կրոնական ըմբռնումները, ինչպես նաև հայրենասիրական դաստիարակության վերաբերյալ մոտեցումները:

Արժեհամակարգը յուրաքանչյուր ժամանակաշրջանում ստանում է նոր ձևակերպումներ, սակայն դրանց առանցքը մնում է անփոփոխ՝ մարդը և նրա հոգևոր նկարագիրը:

Առաջին ենթագլխում, որը վերնագրված է **«Վեհափառ Հայրապետն անձի ձևավորման մասին»**, կարևորվում ու արժևորվում են մարդու արժեքային կողմնորոշումն ու մարդ-հասարակություն փոխհարաբերության ընկալումը՝ դիտարկելով արժեքների տեղն ու դերը որպես անձի ինքնության ձևավորման կարևորագույն բաղադրիչ:

Գարեգին Վեհափառը մեծագույն վտանգ էր համարում մարդկության մեջ լավի ու վատի տարբերակման զգացողության կորուստը: Նրա համոզմամբ՝ գիտությունն ու կրոնը պետք է փոխլրացնեն միմյանց, քանի որ առանց այդ ներդաշնակության մարդը չի կարող ինքնաճանաչման ճանապարհ անցնել: Արժեքները ձևավորվում են ոչ միայն հասարակության գիտակցության մեջ, այլև յուրաքանչյուր անձի ներաշխարհում՝ սկսած մանկությունից: Ընտանիքը դառնում է առաջնային օղակ, որտեղ ձևավորվում է բարու և չարի տարբերակման կարողությունը: Ըստ Վեհափառի՝ առաջնային են հոգևոր արժեքները՝ սերը, բարին, գեղեցիկը, երջանկությունը և առաքինությունը: Նա զգուշացնում էր նյութական արժեքների գերակայության վտանգի մասին՝ ընդգծելով դրանց անցողիկ բնույթը: Մարդը պետք է գտնի հավասարակշռություն հոգևոր և նյութական արժեքների միջև՝ չդառնալով վերջիններիս գերին: Համաշխարհայնացումը բերեց արժեքների փոխակերպում, ինչի հետևանքով վտանգվեց ազգային ինքնությունը: Վեհափառը շեշտում էր Եկեղեցու դերը՝ որպես բարոյական տոկունության աղբյուր և ժողովրդի հոգևոր ուղեցույց: Նրա պատգամը պարզ էր. ազգի գոյատևման ու զորացման բանալին հոգևոր ամրությունն է, ոչ թե նյութական հարստությունը:

Երկրորդ ենթագլխում, որը վերնագրված է **«Փիլիսոփայության և կրոնի փոխառնչությունները Վեհափառի հայացքներում»,** վերլուծված են Գարեգին Առաջին Կաթողիկոսի կրոնական ու փիլիսոփայական հայացքները:

Վեհափառի համոզմամբ՝ բանականությունն ու հավատը հակադիր չեն, այլ փոխլրացնում են միմյանց, քանի որ ճշմարիտ հավատը չի կարող զատվել բարոյական կյանքից: Նրա հայացքներում կարևոր տեղ ունի խոկումը՝ որպես

Աստծո ներկայության զգացում մարդու կյանքում: Ամենայն Հայոց Գարեգին Ա Կաթողիկոսը կրոնը դիտարկում էր ոչ միայն որպես ուսմունք, այլև ապրած ճշմարտություն:

Երրորդ ենթագլխում, որի վերնագիրն է **«Դաստիարակության հարցերը Վեհափառի աշխատություններում»,** վերլուծված են կրոնական, ընտանեկան, աշխատանքային, էկոլոգիական դաստիարակության հիմնահարցերը, որոնք տեղ են գտել Վեհափառ Հայրապետի տարբեր տարիների աշխատություններում ու քարոզներում:

Վեհափառ Հայրապետը դաստիարակությունը համարում է անձի ձևավորման առանցքային գործոն: Կրոնը և բարոյական արժեքները կարևոր դեր ունեն անձի հոգևոր զարգացման մեջ: Ամենայն Հայոց Գարեգին Ա Կաթողիկոսը դաստիարակությունը դիտարկում է որպես հոգևոր-բարոյական արժեքների փոխանցման շարունակական գործընթաց, ուր անձը պետք է գիտակցի իր մարմնի, մտքի ու հոգու նկատմամբ պատասխանատվությունը՝ սեփական առողջությունը պահպանելու համար:

Նրա հայացքներում առանձնահատուկ տեղ է զբաղեցնում աշխատանքային դաստիարակությունը՝ շեշտելով աշխատանքի սրբարար դերը՝ որպես մարդու արժանապատվության ու երջանկության աղբյուր:

Վեհափառ Հայրն անդրադառնում է էկոլոգիական դաստիարակությանը՝ ընդգծելով բնապահպանության կարևորությունը, և կապում այն էկումենիկ համաշխարհային շարժման հետ՝ շեշտելով, որ արարչագործության նկատմամբ անտարբերությունը մեղք է Աստծո հանդեպ:

Ընտանեկան դաստիարակության հարցերին անդրադառնալիս Վեհափառը նշում է, որ մոր ժպիտը, հոր հոգածությունը և ընտանիքի երջանկաբեր մթնոլորտը երեխայի դաստիարակության կարևորագույն հիմքերն են: Սերը, ըստ նրա, Աստծո ճառագայթումն է, որ դրսևորվում է մարդկային հարաբերությունների բոլոր մակարդակներում, և ընտանիքը պետք է դառնա այդ սիրո կենսագործման օջախ: Ընտանեկան ճգնաժամի պատճառները նա տեսնում է դպրոցում բարոյական դաստիարակության բացակայության, զանգվածային լրատվամիջոցների անբարենպաստ ազդեցության և Եկեղեցու քարոզչության թերացումների մեջ: Արդյունքում՝ Գարեգին Ա-ն դաստիարակության ամբողջ համակարգը կառուցում է քրիստոնեական արժեքների վրա՝ կարևորելով ընտանիքի, դպրոցի և եկեղեցու համատեղ պատասխանատվությունը սերնդի դաստիարակության գործում:

Չորրորդ ենթագլխում, որը վերնագրված է **«Հայրենասիրական դաստիարակության գաղափարը Վեհափառ Հայրապետի աշխատություններում»,** ներկայացված և վերլուծված է հայ ժողովրդի ազգային, հոգևոր և դաստիարակչական արժեքների պահպանման և փոխանցման խնդիրը Գարեգին Ա Վեհափառի գաղափարների և գործունեության հիմքում: Վեհափառի պատգամը հնչում է որպես հոգևոր ու ազգային կոչ՝ միավորվելու, արարելու և ամրապնդելու մեր ինքնությունը՝ հոգևոր ակունքներից ծնվող գիտակցությամբ:

Վեհափառը շեշտում էր, որ եկեղեցին անքակտելիորեն շաղախված է հայ կյանքի հետ և ոչ միայն կրոնական, այլև ազգային ինքնության պահպանման հիմնասյունն է: Նրա հավատամքն էր, որ հայրենիքի, եկեղեցու, դպրոցի ու ընտանիքի համատեղ ջանքերով են դաստիարակվում սերունդներ՝ որպես ազգային, հոգևոր ու համամարդկային արժեքների կրողներ:

Վեհափառ Հայրապետը կարևորում էր Սփյուռքի և հայրենիքի կապը՝ որպես մեկ հոգևոր աշխարհագրության դրսևորում: Վեհափառի խոսքերը հիշեցնում են, որ անցյալը պետք է ծառայի որպես ուժի և տեսլականի աղբյուր՝ ներկան կերտելու և ապագան ամրապնդելու համար: Նրա պատգամը հավերժական է՝ հայը պետք է հավատարիմ մնա իր հավատին, լեզվին, հայրենիքին և ընտանիքին՝ միաժամանակ բաց լինելով համամարդկային արժեքների համար:

Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Ա-ի մտքերը միավորում են ազգային ու համամարդկային չափումները՝ մատնանշելով, որ հայ ժողովրդի հարատևության գաղտնիքը հավատի, հայրենասիրության, մայրենի լեզվի և ընտանիքի պահպանության մեջ է:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հանգամանորեն ուսումնասիրելով և վերլուծելով Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Ա-ի մանկավարժական գործունեությունն ու հայացքները՝ եկել ենք հետևյալ եզրակացությունների.

1. Կիլիկիայի հայկական պետության կործանումից հետո Սիրիայում և Լիբանանում ապաստանած հայկական համայնքները, հաղթահարելով բազմաթիվ դժվարություններ, գրանցել են մի շարք ձեռքբերումներ՝ շնորհիվ այնպիսի անհատականությունների, ինչպիսին էր Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Գարեգին Բ-ն, նույն ինքը՝ Ամենայն Հայոց Գարեգին Ա Կաթողիկոսը:

2.Վեհափառ Հայրապետն իր բազմաբովանդակ հոգևոր-հասարակական-մշակութային-ազգապահպան գործունեության շնորհիվ ոչ միայն մեծ առաջընթաց է գրանցել միջեկեղեցական կապերի հետագա ընդլայնման և քրիստոնեական ոգով գործակցելու հարցերում, այլև մեծ ավանդ է ունեցել հայ հասարակության կյանքում տեղի ունեցող կարևորագույն իրադարձություններում:

3. Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության Դպրեվանքում կրթական գործի կազմակերպման և հայապահպանության գործում իր մեծ դերակատարությունն է ունեցել Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Գարեգին Երկրորդը:

4. Վեհափառի մանկավարժական մոտեցումները հրապարակախոսության մեջ նրան բացահայտում են իբրև մտավորականի, աստվածաբանի և հմուտ մանկավարժի:

5. Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության Դպրեվանքում, Սուրբ Էջմիածնի Գևորգյան հոգևոր ճեմարանում տեսչական և դասախոսական գործունեության ընթացքում Վեհափառ Հոր կողմից ներդրվել են կրոնական և աստվածաբանական մի շարք դասագրքեր և ուսումնական ձեռնարկներ, որոնք չեն կորցրել իրենց գիտական նշանակությունն ու կիրառելիությունը:

6. Արդիական են Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Ա-ի մանկավարժական գործունեության հիմնական ուղենիշներն ու մոտեցումները ուսուցման գործընթացի կազմակերպման, ուսուցման սկզբունքների և մեթոդների, ուսուցչի կերպարի և նրան ներկայացվող անձնային և մասնագիտական որակների մասին նրա տեսակետները:

7. Վեհափառը աստվածաբանական, հոգեբանական, փիլիսոփայական և մանկավարժական տեսանկյուններից է ներկայացրել մարդու անձի ձևավորման և զարգացման վրա ազդող գործոնները:

8. Դաստիարակության բովանդակության, տեսակների, սկզբունքների և մեթոդների մասին Վեհափառի մտքերը առաջադիմական են և կիրառելի մեր օրերում:

9. Առանցքային է Վեհափառ Հայրապետի դերակատարությունը հոգևոր նոր սերնդի պատրաստության գործում՝ հիմնված կրթադաստիարակչական և արժեհամակարգային բարեփոխումների կենսունակության վրա:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում՝

1. **Բաղդասարյան Վ.,** Գարեգին Երկրորդ Վեհափառի մանկավարժական գործունեությունը Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության Դպրեվանքում, «Մխիթար Գոշ», 2016, 2(45), էջ 73-76:
2. **Բաղդասարյան Վ.,** Հոգևոր արժեքների պահպանման հարցը Գարեգին Առաջին Կաթողիկոսի աշխատություններում, Մխիթար Գոշ, 2019, 2, էջ 27-33:
3. **Հարությունյան Ն., Բաղդասարյան Վ.,** Գարեգին Առաջին Ամենայն Հայոց Կաթողիկոսի փիլիսոփայական մոտեցումներն անձի ինքնաճանաչման հարցերին և դրանց կրոնական մեկնությունները, «Կրթությունը 21-րդ դարում» գիտամեթոդական միջազգային գրախոսվող հանդես, 2021, 3(1), էջ 218-225:
4. **Բաղդասարյան Վ.,** Կրոնական դաստիարակության առանձնահատկությունները Գարեգին Առաջին Կաթողիկոսի աշխատություններում, «Կրթությունը 21-րդ դարում» գիտամեթոդական միջազգային գրախոսվող հանդես, 2022, 4(2), էջ 217-223:
5. **Բաղդասարյան Վ.,** Հայրենասիրական դաստիարակության հարցերը Գարեգին Առաջին Ամենայն Հայոց Կաթողիկոսի աշխատություններում, «Կրթությունը 21-րդ դարում» գիտամեթոդական միջազգային գրախոսվող հանդես, 2023, 5(2), էջ 292-299:
6. **Բաղդասարյան Վ.,** Մանկավարժ-կաթողիկոս Գարեգին Առաջինի մոտեցումներն ու հայացքները ուսուցչի կոչման ու առաքելության վերաբերյալ, «Կրթությունը 21-րդ դարում» գիտամեթոդական միջազգային գրախոսվող հանդես, 2025, 7(1), էջ 344-352:
7. **Բաղդասարյան Վ.,** Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Առաջինի հոգևոր-հասարակական գործունեությունը, «Մանկավարժական միտք» ամսագիր, 2025, 1-2, էջ 263-271:

БАГДАСАРЯН ВИКТОРИЯ РУБЕНОВНА
КАТОЛИКОС ВСЕХ АРМЯН ГАРЕГИН ПЕРВЫЙ - ПЕДАГОГ

Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13.00.01. "Теория и история педагогики".

Защита диссертации состоится 28 ноября 2025 года в $14^{\underline{00}}$ на заседании специализированного совета 058 по Педагогике Комитета по высшему образованию и науке РА, действующем при Ереванском Государственном Университете.

Адрес: РА, 0025, г. Ереван, улица Абовяна 52А, корпус 8 ЕГУ, аудитория 208.

РЕЗЮМЕ

Актуальность темы: Деятельность Католикоса Всех Армян Гарегина I имеет особое значение в контексте важнейших проблем современности — духовного возрождения нации, укрепления демократии и государства. Среди различных аспектов наибольшее внимание уделено его педагогической деятельности, где учитель сравнивается с горящей свечой, подчеркивая важность самопожертвования. Взгляды и подходы Католикоса считаются значимой страницей истории армянской педагогической мысли, вдохновляющей поколения служить на благо нации и государства. Доктор педагогических наук, проф. Н.Арутюнян впервые оценила педагогическую деательность Гарегина I в своей книге "Армянские педагоги-католикосы".

Цель исследования: Цель исследования — изучить, проанализировать и представить педагогическую деятельность Католикоса Великого Дома Киликийского Гарегина II и Католикоса всех Армян Гарегина I, его взгляды и подходы к формированию личности, процессам обучения и воспитания, а также выявить его место и роль в истории армянской педагогической мысли.

Задачи исследования.

1. Кратко представить вопросы об активизации армянских общин, существующих в разных городах Сирии и Ливана, после разрушения Армянского государства Киликия, где большое армянское население обрело убежище, а также рассмотреть трудности и достижения армянских диаспор Сирии и Ливана.

2. Изучить и представить важные моменты богатой биографии Гарегина I, его духовно-общественную, культурную и национально-сохранительную деятельность.

3. Исследовать и представить педагогическую деятельность Католикоса Великого Дома Киликийского Гарегина II.

4. Исследовать и проанализировать педагогические подходы Католикоса Гарегина I Всеармянского в его публицистике.

5. Представить и оценить учебные пособия и учебники, разработанные Святейшим Католикосом Всеармянским.

6. Проанализировать дидактические взгляды Его Святейшества, выявить их философские и психолого-педагогические основания.

7. Раскрыть ценные педагогические подходы Католикоса относительно формирования личности.

8. Проанализировать взгляды Его Святейшества на содержание и виды воспитания.

9. Оценить роль Католикоса Гарегина I Всеармянского в образовании нового духовного поколения.

Новизна исследования:

1. Изучены и оценены духовная и педагогическая деятельность Святейшего как за рубежом, так и в Армении.

2. Проанализированы его взгляды и подходы к обучению и воспитанию в авторских педагогических трудах.

3. Проанализированы педагогические взгляды, изложенные в публицистических материалах Гарегина I.

4. Изучены философские, психологические, педагогические работы, статьи, энциклики и архивные материалы (Армения и Ливан), которые помогли раскрыть и представить Святейшего как педагога.

Теоретическая значимость: Философские, психологические и педагогические труды, статьи, энциклики и многочисленные архивные материалы, сохраненные в Армении и Ливане, были всесторонне изучены и проанализированы, что позволило представить уникальные подходы Гарегина I к обучению и воспитанию.

Практическая значимость: Практическая значимость исследования заключается в том, что оно обогащает историю армянской педагогической мысли

образом достойного теоретика и практического педагога. Материалы диссертации могут служить первоисточниками для заинтересованных в данной теме.

Структура и объем исследования: Диссертация состоит из введения, четырех глав, заключения, списка использованной литературы и приложений. Объем диссертации составляет 156 компьютерных страниц.

VIKTORIA R. BAGHDASARYAN
CATHOLICOS OF ALL ARMENIANS KAREKIN I – PEDAGOGUE

The dissertation for the degree of Candidate of Pedagogical Sciences in the specialty 13.00.01 – «Theory and History of Pedagogy» will be defended on 28th November, 2025, at $14^{\underline{00}}$ at the session of Specialized Council 058 on Pedagogy of the Committee on Higher Education and Science of the Republic of Armenia, operating at Yerevan State University.

Address: Republic of Armenia, 0025, Yerevan, Abovyan str. 52a, 8th building of Yerevan State University, room 208.

SUMMARY

Relevance of the topic: The activities of Catholicos of All Armenians Karekin I hold special significance in the context of the most important contemporary issues—national spiritual revival, strengthening democracy, and statehood. Among his various contributions, particular attention is given to his pedagogical work, where the teacher is compared to a burning candle, emphasizing the importance of self-sacrifice. The Catholicos's views and methods are considered an important chapter in the history of Armenian pedagogical thought, inspiring generations to serve the nation and the state. Doctor of Pedagogical Sciences, Prof. N. Harutyunyan was the first to evaluate Karekin I's pedagogical skill and dedication in her book «The Armenian Pedagogue-Catholicos».

Purpose of the research: The purpose of the research is to study, analyze, and present the pedagogical activities of Karekin II, Catholicos of the Greate House of Cilicia, and His Holiness Karekin I, Catholicos of All Armenians, his views and approaches to the formation of personality, teaching and upbringing processes, and to reveal his place and role in the history of Armenian pedagogical thought.

Research Objectives:

1. Briefly present the issues of the activation of Armenian communities existing in various cities of Syria and Lebanon after the destruction of the Armenian Kingdom of Cilicia, where a large Armenian population found refuge, as well as examine the difficulties and achievements of the Armenian diasporas in Syria and Lebanon.

2. Study and present the important moments of the rich biography of the Catholicos of All Armenians, his spiritual, social, cultural and national preservation activities.

3. Study and present the pedagogical activities of Catholicos of the Great House of Cilicia Karekin II.

4. Investigate and analyze the pedagogical approaches of Catholicos Karekin I of All Armenians in his publicistic works.

5. Present and evaluate the educational manuals and textbooks developed by the Catholicos of All Armenians.

6. Analyze the didactic views of the Catholicos of All Armenians, revealing the philosophical and psycho-pedagogical basises.

7. Uncover the valuable views of the Catholicos on personality formation.

8. Analyze the Catholicos views on the content and types of education.

9. Evaluate the role of Catholicos Karekin I of All Armenians in the education of the new spiritual generation.

Scientific novelty of the research

1. The spiritual and pedagogical activities of His Holiness have been studied and evaluated both abroad and in Armenia.

2. His views and approaches regarding teaching and education have been analyzed in his own pedagogical works.

3. The pedagogical perspectives summarized in the publicist materials of Karekin I have been analyzed.

4. His philosophical, psychological, pedagogical works, articles, encyclicals, and archival materials (from Armenia and Lebanon) have been examined to reveal and present His Holiness as a pedagogue.

The theoretical significance of the research: His Holiness's philosophical, psychological, and pedagogical works, articles, encyclicals, and numerous archival materials preserved in Armenia and Lebanon have been comprehensively studied and analyzed, presenting his unique approaches to teaching and upbringing processes.

The practical significance of the research: The practical significance of the research lies in enriching the history of Armenian pedagogical thought with the image of a worthy theorist and practical pedagogue. The materials of the dissertation may serve as primary sources for those interested in the topic.

The structure and volume of the dissertation: The dissertation consists of an introduction, four chapters, conclusions, a list of used literature, and appendices. The volume of the dissertation is 156 computer pages.